ոք հզօրագոյն քան զառաջինն։

Յառաջնում ամի Բեահեայ Բդեշխին Դամասկոսի եկն մինչ 'ի Սամարիա, և Դիոնէսիոս եպիսկոպոս ընդ նմա, եւ լուեալ զապստամբութիւն Եէնիչէրեաց Երուսաղէմի, ոչ կամեցաւ գնալ անդ, այլ առաքեաց զսեղանաւոր իւր յազգէ Հայոց՝ ժողովել զհարկ երկրին։ Սմա պատուիրեալ էր Դիոնէսիոս վասն առնելեաց իւրոց, և 'ի լինել բանից՝ պատմեալ էր Եղիա եպիսկոպոս զԴիոնէսիոսէ և զաղքատութենէ վանաց, և նորա գրեալ առ Բեահեայն, և նա այնպէս մեկնեցաւ յայնժամ 'ի տեղի իւր։ Իսկ 'ի սմին ամի եկեալ յԵրուսաղէմ իջեւանեցաւ 'ի վանս Յունաց, և գրեաց անտի զերկուս գիրս առ Խորհրդականս Աթոռոյն, յորս առաջի դնէր նոցա գալ 'ի վանս և դէմ յանդիման խօսիլ ընդ նոսա, յայտ արարեալ 36 ամեայ զաշխատութիւնս իւր, և խնդրէր զ10,000 դահեկանն ամբողջ տոկոսիւք, և զծախսն անցելոյ ամին, որոյ ետուն պատասխանի՝ չմտանել 'ի վանս 'ի դայթակղութիւն ժողովրդոց, և վասն առնելեաց իւրոց սպասել գալստեան Ծայրագոյն կառավարչի Աթոռոյն, զի ինքեանք չէին ձեռնհաս տալ ումեք պարտս կամ տոկոսիս. այլ 'ի հասանիլ բանակի Բդեշխին Դամասկոսի լռեաց առ ժամն։

Կուսակալն Դամասկոսի գրեալ էր առ մեծամեծս բանակին, 'ի հասանել նոցա յԵրուսաղէմ, պահանջել յիւրաքանչիւր վանաց 60,000 դահեկանս իբր նպաստ. Լատինք և Յոյնք հոգացին զգործս իւրեանց. Հայք գոլով 'ի չքաւորութեան՝ առաջի եդին զհրովարտակն, այլ նոքա ոչ ընկալան զայն. զի որպէս յառաջագոյն առեալ էր Մուսդաֆա Փաշայ, նոյնպէս և այժմ պահանջէին, թէպէտեւ Հայք ասէին թէ զայն յետս առին 'ի Կոստանդինուպոլիս. այլ նոքա ասէին, այժմ մեք առնումք, ապա դուք յետս առէք անդ։ Եւ զկնի տօնի Զատկին առաքեցին 'ի վանս 30 Մղրպի զօրս, և զի աւուրքն ծոմապահութեան էին նոցա, յերեկոյին դիմեալ 'ի խոհանոցն կալան զսոհարարն, և սկսան խոշտանգելով պահանջել 'ի նմանէ զհամագամ կերակուրս, և ելեալ անտի հարկանէին զդրունս սենեկաց. եւ զորս միանգամ դտանէին՝ դան մահու լուծանէին 'ի վերայ նորա, նախատելով և հայհոյելով, յան-